

**DIGITAL ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ**
**(ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)**

|  |   |
|--|---|
| Քարտի տեսակ  | Visa Digital  |
| Քարտի պատվիրման եղանակ   | Ինտեկոմբայլ համակարգի միջոցով   |
| Քարտային հաշվի արժույթ   | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի   |
| Քարտի գործողության ժամկետ  | 1 տարի  |
| Քարտի թողարկման միանվագ վճար   | Չի սահմանվում   |
| Քարտային հաշվի սպասարկման տարեկան վճար   | Չի կիրառվում  |
| Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը                  | 0%  |
| Կից քարտերի հնարավորություն  | Չի կիրառվում  |
| Քարտային հաշվից կանխիկ տրամադրում Ինտեկոբանկի դրամարկղերում                            | <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ դրամ` 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ</li> <li>• ՌԴ ռուբլի` 0.5%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ</li> <li>• ԱՄՆ դոլար` 1%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ</li> <li>• Եվրո` 1%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ</li> </ul> |
| Քարտային հաշվից Նույն հաճախորդի այլ բանկային հաշիվներին փոխանցում <sup>1</sup> (միայն) | անվճար  |

|   |  |
|---|--|
| ԻնեկոՕնլայն/ԻնեկոՄոբայլ համակարգերով)                         |  |
| Քարտից քարտ փոխանցում <sup>1</sup>                            | 0.5%   |
| Կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում | Յուրաքանչյուրը 10 ՀՀ դրամ, եթե հաճախորդը ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն:<br><br><i>Հաճախորդի կողմից այլ հանձնարարական չլինելու դեպքում SMS հաղորդագրությունները ուղարկվում են 1,000 ՀՀ դրամ/ 2 ԱՄՆ դոլար/ 2 Եվրո/125 ռուբլի գումարը գերազանցող գործարքների համար:</i> |
| Քարտային հաշվի վաղաժամկետ փակում                              | անվճար   |

### Ընդհանուր դրույթներ սույն փաստաթղթով սահմանված Visa Digital քարտերի համար

1. Visa Digital քարտը դեբետային քարտ է, որը հասանելի է քարտապանին ԻնեկոՄոբայլ հավելվածում և նախատեսված է առցանց միջավայրում գործարքներ իրականացնելու համար:
2. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտը ԻնեկոՄոբայլ համակարգում հասանելի է դառնում քարտը պատվիրելուց հետո առավելագույնը 2 ժամվա ընթացքում: Visa Digital քարտի տվյալները (քարտի համարը, վավերականության ժամկետը և քարտի իսկությունը ստուգուղ կոդը (CVV)) քարտապանին տրամադրվում են ԻնեկոՄոբայլ համակարգի միջոցով:
3. Յուրաքանչյուր վճարային քարտի կցվում է միայն մեկ արժույթով հաշվեհամար:
4. Քարտային հաշվի նվազագույն մնացորդ չի սահմանվում:
5. Յուրաքանչյուր հաճախորդի գծով, յուրաքանչյուր արժույթով (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի) Visa Digital քարտերի առավելագույն քանակը չի կարող գերազանցել 2 քարտը:

<sup>1</sup> ԻնեկոՕնլայն/Մոբայլ համակարգերի «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարվող փոխանցումների համար կիրառվում են «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով կատարված գործարքների համար սահմանված սակագները, Ինեկոբանկի պաշտոնական կայքի «Առցանց վճարումներ» համակարգով կատարված գործարքների համար կիրառվում են «Առցանց վճարումներ» համակարգի միջոցով կատարվող գործարքների համար սահմանված սակագները:

6. Visa Digital վճարային քարտով անկանխիկ գործարքների իրականացումն անվճար է: Մեկ անկանխիկ գործարքի համար առավելագույն սահմանաչափ, ինչպես նաև անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ և քանակ չի սահմանվում: Քարտով կատարված անկանխիկ գործարքների պատասխանատվությունը կրում է հաճախորդը:
7. Visa Digital վճարային քարտի բլոկավորումը/ապաբլոկավորում անվճար է:
8. Սույն փաստաթղթով սահմանված վճարային քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայությունը ակտիվանում է քարտի պատվիրման պահին հաճախորդի համապատասխան հանձնարարականի հիման վրա: Հաճախորդը կարող է նաև ընտրել գումարի չափը, որը գերազանցող գործարքների վերաբերյալ ցանկանում է ստանալ SMS հաղորդագրություն: Վճարային քարտով կատարված գործարքների վերաբերյալ SMS հաղորդագրությունների ուղարկման ծառայության ակտիվացում/ապասկտիվացում, ինչպես նաև վերոնշյալ գործարքի գումարի չափի փոփոխություն կարող է իրականացվել քարտի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից Բանկի տարածքում/ԻնտեկտՕնլայն համակարգում ներկայացված համապատասխան դիմում-հայտի հիման վրա:
9. Քաղվածքի ամսաթիվ (Statement date) է համարվում յուրաքանչյուր ամսվա 1-ը: Ամսական քաղվածքի տրամադրումը անվճար է: Յուրաքանչյուր լրացուցիչ քաղվածքի տրամադրման դեպքում գանձվում է սակագին՝ համաձայն համապատասխան սակագնային պլանի:
10. Visa Digital վճարային քարտը ենթակա չէ վերաթողարկման կամ փոխարինման:
11. Visa Digital վճարային քարտի գործողության ժամկետի ավարտին կամ քարտային հաշվի վաղաժամկետ փակման դեպքում քարտային հաշվին առկա դրամական միջոցները փոխանցվում են հաճախորդի ընթացիկ հաշվին առավելագույնը հաջորդ ամսվա առաջին 5 աշխատանքային օրերի ընթացքում:
12. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն: